



ՀՀ, ք. Երևան, 0009, Տեղյան փ. 105/1, «Ցիտադել» բիզնես կենտրոն, 204 սենյակ
Հեռ: +374 10 514 315, ֆաքս: +374 10 514 317, էլ. փոստ: aspired@engl.com

IFB # 020218-01. Ակվակուլտուրաների տեխնոլոգիաների փոխանցման ծրագրի շրջանակներում, ձկնաբուծական տնտեսությունում ջրի արդյունավետ օգտագործման համակարգի կառուցում

2018թ.-ի մարտի 14-ին ձկնաբուծարան կատարած այցելությունից հետո նախամրցութային հանդիպում

Պարզաբանումներ

Ամսաթիվ՝ 14 մարտի, 2018թ. **Վայր՝** ԱՄՆ ՄԶԳ ԳUSO ծրագրի գրասենյակ (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տեղյան 105/1, «Ցիտադել» բիզնես կենտրոն, 204 սենյակ)

N	Հարց	Պատասխան
1.	Հայտարարության մեջ նշվում է, որ դիմող կազմակերպությունը պետք է նմանատիպ ծրագրերի իրականացման փորձ ունենա: Ի՞նչ նկատի ունեք ասելով նմանատիպ ծրագրեր:	Հիմնականում խոսքը ավագանների շինարարության փորձի մասին է: Իրականում աշխատանքը բազմապրոֆիլ է և դուք կարող եք ներկայացնել այն աշխատանքը որի փորձը ունեք, իսկ եթե չունեք փորձ, օրինանակ կոմպրետորային կայան կառուցելու, որը նախատեսվում է ծրագրով, ապա կարող եք ներկայացնել շինարարության ոլորտում ունեցած փորձը: Պահանջի նպատակն է, որ դուք հստակ պատկերացում ունենաք թե ինչ բնույթի աշխատանքներ են կատարվելու: Պետք է տրամադրել առնվազն երեք պատվիրատուների կոնտակտային տվյալները (հեռախոսահամար, էլ. փոստի հասցե, կազմակերպության հասցե)՝ հայտատուի արտադրանքի և ծառայությունների վերաբերյալ կարծիք հարցնելու համար:
2.	Խնդրում ենք ավելի մանրամասն պարզաբանումներ տալ հայտում նշված բանկային երաշխիք (Կատարման երաշխիք) 10% -ի և բանկային հետվճարային երաշխիք (Հետվճարային երաշխիք) 5%-ի վերաբերյալ:	Պայմանագրի գնի 5%-ի չափով հետվճարային երաշխիքի պահանջի նպատակը հետևյալն է . ծրագրի ավարտից հետո մեկ տարվա ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում կատարող կազմակերպությունը պարտավորվում է վերացնել թերությունը, հակառակ դեպքում ME&A-ը բանկից կպահանջի երաշխիքային գումարի չափով: Ինչ վերաբերում է 10%-ի պահանջին, նախքան պայմանագիր կնքելը, հաղթող կազմակերպությունը պետք է նախապես ներկայացնի պայմանագրի գնի 10%-ի չափով կատարման երաշխիք, հակառակ դեպքում պայմանագիր կկնքվի հաջորդ խելամիտ հայ ներկայացրած կազմակերպության հետ:
3.	Ի՞նչ սկզբունքով են ընդունվելու ապրանքները, օգտագործվող նյութերը, տեխնոլոգիական սարքավորումները:	Այս ծրագիրը պիլոտային է և հետագայում պետք է կիրառելի լինի բոլորի համար: Ընտությունը կատարվելու է սարքավորման որակի և գնի հիման

		վրա: Ընտրվելու են նյութեր, որոնք բավարար որակ են ապահովում, հուսալի են, ունեն որոշակի հեղինակություն շուկայում: Այսինքն ընտրվելու են սարքավորումներ, որոնք գնային և որակային առումով գտնվում են որոշակի տրամաբանական հավասարակշռության մեջ:
4.	Կա՞ն գնումներ կատարելու որոշակի բյուջե:	Ոչ:
5.	Պահանջ կա՞ առաջարկում մանրամասնել ինչ սարքավորումներ ենք առաջարկում տեղադրել:	Դա կապված է թե հստակ տվյալ սարքավորումը ինչ տոկոս է կազմում առաջարկի գնի մեջ: Եթե սարքավորումը ծրագրի հիմնական բաղկացուցիչ մաս է, ապա ցանկալի է մանրամասներ ներկայացնել: Այս ծրագրի հիմնական բաղադրիչներից է օրինակ՝ կոմպրեսորը:
6.	Ո՞ր կողմն է ապահովելու շինթույլտվությունները:	Ծրագիրը իրականացվելու է մասնավոր տարածքում և սեփականատերը պետք է, նախագծի հիման վրա, ստանա բոլոր շինթույլտվությունները Ակնալիճ համայնքից: